



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԱԵՄ)  
ARMENIAN APOSTOLIC CHURCH  
YOUTH ASSOCIATION (ACYA)

**MEMBERSHIP APPLICATION  
GOALS and OBJECTIVES**

- 1.- Instruct Armenian Youth and the Young Adults on the doctrines and traditions of the Armenian Apostolic Church.
- 2.- To raise the members' awareness of spiritual, religious, ethnic, cultural and national heritage.
- 3.- To promote Christian love among members, so they may manifest that love through harmony, mutual respect and dedication in striving to become better Christians and ideal citizens.
- 4.- To nurture dedication and loyalty towards the Armenian Church, so members can take an active role in the betterment and progress of that institution.

Last Name-----First Name -----Date-----

Address -----

City -----State ----- Zip -----

Occupation -----Education-----

Tel (----)----- (----)----- ( ----) ----- E-Mail -----

Home

Work

Cell.

Committees: Educational  Social  Sports

“Be perfect as your Heavenly Father is perfect.” (Matthew 5:48)



**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԱՆՄ)**

**ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ**

**Յօդուած Ա.**

Կազմակերպութեան անունն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն: Համառօտուած ձեւով՝ Հ.Ա.Ե.Մ.:

**Յօդուած Բ.**

**ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Կազմակերպութիւնս կը վայելէ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի հովանաւորութիւնը եւ կը գործէ անոր վարչական ցուցմունքներով:

**Յօդուած Գ.**

**ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ**

Կազմակերպութեան նախագահն է Թեմի Բարեջան Առաջնորդը, փոխ նախագահն է Խառն ժողովին կողմէ նշանակուած Քրիստոնէական Դաստիարակութեան Վարիչը կամ Վարիչները:

**Յօդուած Դ. ՎԱՅՐԸ**

Կազմակերպութիւնը կը գործէ Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակութեան եւ Երիտասարդաց Բաժանմունքի գրասենեակէն:

**Յօդուած Ե. ՆՇԱՆԱԲԱՆ**

«Եղերուք կատարեալք, որպէս երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է» (Մատթ. 5:48):  
Կամ

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա. Կորնթ. 16:13-14):

**Յօդուած Զ. ՆՊԱՏԱԿ**

Կազմակերպութեանս նշանաբանը խտացումն է իր ընդգրկած նպատակին, որ է.

ա.- Հայց. Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն դաստիարակել ներկայ հայ երիտասարդութիւնը:

բ.- Երկսեռ իր անդամները հաղորդ դարձնել անցեալի մեր հոգեւոր-ազգային եւ մշակութային ժառանգութեանց:

գ.- Կերտել հոգեկան արժէքներու հանդէպ երկիւղածութիւն: Կրօնական եւ ազգային աւանդներու հանդէպ գիտակից հաղորդ ոգի: Ըլլալ նախանձախնդիր մեր հայրերու հաւատքին, հայրենի աւանդութեանց, իտէալներուն եւ տեսիլքներուն:

դ.- Իր երկսեռ անդամներուն մէջ մշակել սէր եւ հաւատարմութիւն հանդէպ մայրենի եկեղեցւոյ եւ հանդէպ հայոց հայրենիքին, եւ գործնապէս սատարել անոնց պայծառութեան եւ յառաջդիմութեան: Ըլլալ ճշմարիտ քրիստոնեայ եւ տիպար քաղաքացի:

**Յօդուած Է.- ՄԻՋՈՑՆԵՐ**

Կազմակերպութիւնս իր առաջադրած նպատակին հասնելու համար հետեւեալ կարելի եւ հնարաւոր միջոցները նկատի պիտի ունենայ որպէս ազգակ.

**1.- Կրօնա-դաստիարակչական**

ա.- Լսարան: Ժողովրդական, կրօնա-ազգային լսարաններ կազմակերպել միութեանս անդամներուն, եւ յատկապէս ժողովուրդին համար:

բ.- Կազմակերպութեան անդամներուն համար դաստիարակչական ծրագիրներ եւ դասընթացքներ կազմակերպել Աստուածաշունչի, Հայ Եկեղեցւոյ Պատմութեան, եկեղեցական հայրերու, առաքելական դաւանութեան, ծիսագիտութեան, հայ լեզուի ուսուցման, կրօնա-եկեղեցական եւ ազգային գիտելիքներ ջամբելու:

գ.- Օտարամուտ կրօնական շարժումներու եւ գլխաւոր աղանդներու մասին լուսաբանիչ եւ դաստիարակիչ յօդուածներ պատրաստել եւ լսարան-հանդիպումներ կազմակերպել:

դ.- Ծրագրուած եւ հերթական կանոնաւորութեամբ թեմիս կրօնական ժողովի կողմէ հովանաւորուած կրօնական նիւթեր, հարցազրոյցներ կազմել, պատրաստել եւ հեռատեսիլէ ներկայացնել:

## **2.- Ընկերային Հաւաք**

Այս հաւաքոյթները կրնան դասախօսական, վիճաբանական եւ արտասանական բնոյթ ունենալ, երգի եւ նուագի մասնակցութեամբ:

## **3.- Թատրոն**

Պատրաստել եւ ներկայացնել կրօնական, ազգային եւ բարոյական հանգամանքով թատերական ներկայացումներ, միանգամայն հետամուտ ըլլալ այլօրինակ հասութարեր ձեռնարկներու:

## **4.- Ընկերային Ծառայութիւն**

Կատարել հաւաքական ծառայութիւններ Հայց. Եկեղեցւոյ կրթական եւ ընկերային գործունէութեան մասնակցելու եւ սատարելու առաջադրութեամբ: Այսպէս, այցելութիւններ եւ ընկերային ծառայութիւններ մատուցանել հայ վարժարաններու, ծերանոցներու, հիւանդանոցներու թէ կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու:

## **5.- Հաստատել գրադարան, ընթերցասրահ եւ խաղավայր:**

## **6.- Հաստատել Web Site Համացանց:**

Երիտասարդաց եւ Պատանեաց խումբերու գործունէութիւնը եւ աշխատանքները, շահեկան նիւթերն ու դասախօսութիւնները հասարակութեան լայն խաւերը իրազեկ դարձնելու եւ տեղեկութիւններ փոխանցելու:

**Յօդուած Ը.**

**ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

Գործօն անդամ կը համարուին Հայց- Եկեղեցւոյ երկսեռ այն բոլոր զաւակները որոնք մկրտուած են, եւ զբաւոր դիմումով կ'ուզեն անդամագրուիլ եւ մաս կազմել Միութեանս Պատանեաց Բաժանմունքին (14-20 տարիք) կամ Երիտասարդաց Բաժանմունքին (21-35 տարիք), եւ կը խոստանան Միութեանս նպատակը որդեգրել եւ յարգել:

**Յօդուած Թ.**

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ**

Կազմակերպութիւնը ունի հետեւեալ ժողովական Մարմին-Միութիւնները կամ Բաժանմունք-Խումբերը:

- 1.- Անդամական Ընդհանուր Ժողով
- 2.- Կեդրոնական Վարիչ Մարմին
- 3.- Միութիւններ-Բաժանմունքներ
  - ա.- Պատանեաց Միութիւն/Բաժանմունք
  - բ.- Երիտասարդաց Միութիւն/Բաժանմունք
  - գ.- Մարզական
  - դ.- Թատերական

### **1.- Անդամական Ընդհանուր Ժողով**

Հոգեւոր Վարիչի (ներ) նախագահութեամբ եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչի ներկայութեամբ կը գումարուի անդամական ընդհանուր ժողովը:

ա.- Անդամական ընդհանուր ժողովը իր մէջէն կ'ընտրէ օրուան Դիւանը, որ կը վարէ այդ օրուան ժողովը միայն:

բ.- Մեծամասնութիւն կորսնցնող կամ կազմալուծուած ընդհանուր ժողովի մը յաջորդը օրինաւոր է որեւէ պարագայի տակ:

գ.- Անդամական ընդհանուր ժողովէն բացակայողներ չեն կրնար իրենց քուէն փոխանցել ուրիշին, բայց այդ բացակայողները կրնան ընտրուիլ եթէ իրենց բանաւոր բացակայութիւնը իմացուցած են ընդհանուր ժողովին, եւ այս վերջինը հաստատած է զայն ձայներու մեծամասնութեամբ:

դ.- Անդամական ընդհանուր ժողովը տարին անգամ մը, Ազգ. Երեսփոխանական Ժողովէն առաջ, նախընտրաբար Մարտ ամսուն կազմակերպութեան գործօն անդամներէն եւ միութիւն-մարմիններէն որոնք նախապէս իրենց հինգ կամ եօթը ներկայացուցիչները ընտրած/նշանակած՝ ժողով կը գումարէ եւ զաղտնի քուէարկութեամբ Կեդրոնական Վարիչ Մարմինը կ'ընտրէ թիւով ինը կամ տասնմէկ:

ե.- Կեդրոնական Վարիչ Մարմինը ինք կ'ընտրէ իր Դիւանը:

### **2.- Կեդրոնական Վարիչ Մարմին**

Անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած Կեդր. Վարիչ Մարմնի կազմը եւ իրաւասութիւնները:

ա.- Առաջնորդի բացակայութեան, Վարչութեան Նախագահն է Հոգեւոր Վարիչը (ներ), որ միեւնոյն ատեն կազմակերպութեան հոգեւոր խորհրդատուն է: Այս Վարչութիւնն է որ կը վարէ եւ կը վերահսկէ կազմակերպութեան բոլոր տեսակի գործերը:

բ.- Վարչութեան անդամները երկու տարուան ժամանակաշրջանի մը համար կ'ընտրուին, եւ Արեւմտեան Թեմի Կրօնական Ժողովին կողմէ վաւերացուելէ ետք միայն, իրաւունք կ'ունենան գործելու:

գ.- Երկու տարուան ընթացքին հրաժարող կամ մեկնող անդամներուն տեղ կու գան գրաւել ընդհանուր ժողովի մէջ յաջորդ առաւելագոյն քուէ ստացողները: Անդամները կրնան վերընտրուիլ:

դ.- Վարչութիւնը համարատու է Արեւմտեան Թեմի Կրօնական Ժողովին: Ան իր տարեկան տեղեկագիրը պէտք է ներկայացնէ Ազգ. Երեսփոխանական Ժողովին:

ե.- Նոր Վարչութիւն մը ընտրելէ առաջ, նախորդ անդամական ընդհանուր ժողովէ ընտրուած Հաշուեքննիչ Յանձնախումբը պէտք է քննէ հին կազմի հաշիւները եւ գեկուցէ անդամական ընդհանուր ժողովին:

զ.- Հին Վարչութիւնը պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ նորակազմ Վարչութեան Թեմիս Կրօնական Ժողովի կողմէ վաւերացուիլը:

է.- Հին Վարչութիւնը պարտի նոր Վարչութեան փոխանցել կազմակերպութեան ամբողջ գոյքերը, արձանագրութեան տետրերը եւ հաշուետոմարները յանձնումի եւ ստացման արձանագրութիւններով:

ը.- Հոգեւոր Վարիչի նախագահութեամբ նոր Վարչութիւնը իր կազմէն կ'ընտրէ Ատենապետ մը, փոխ-Ատենապետ մը, Ատենադպիր մը, Գանձապահ մը եւ Հաշուապահ մը:

թ.- Կեդրոնական Վարիչ Մարմնի Պարտականութիւնները:

Ծխական շրջաններու Հոգեւոր Հովիւներ ի պաշտօնէ մաս կը կազմեն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Վարիչ Մարմինին եւ պէտք է գործօն աջակցութիւն ցուցաբերեն Վարչութեան տարած աշխատանքներուն:

Կրօնական Ժողովի անմիջական հսկողութիւնը եւ հովանաւորութիւնը վայելող Երիտասարդաց Վարիչ Մարմինը, եկեղեցիներէ եւ ծխական շրջաններէ ընտրեալ ներկայացուցիչներէ կազմուած՝ ունի հետեւեալ պարտականութիւնները:

1. Հսկել, համակարգել եւ գործադրել կազմակերպութեան հետապնդած կրօնա-եկեղեցական դաստիարակչական ծրագիր-ները, համաձայն Հայ Եկեղեցւոյ դաւանութեան եւ ազգային աւանդութեան սկզբունքներուն:
2. Ներդաշնակ միջնորդարի մէջ վերահսկել, առաջնորդել, համադրել եկեղեցիներու պատանեաց երիտասարդաց կազմերու կամ միութիւններու գործունէութիւնները եւ աշխատանքները: Հետամուտ ըլլալ միութեանց եւ յանձնախումբերու տարած աշխատանքներու բարօք ընթացման:

3. Ժողովներէն բղխած որոշումներն ու աշխատանքային ծրագիրները, թելադրութիւններն ու ցուցմունքները ներկայացուցիչներու միջոցաւ փոխանցել ծխական շրջաններու եկեղեցւոյ պատանեաց եւ երիտասարդաց վարչութիւններուն:

4. Մօտէն հետեւիլ Ներկայացուած ընտրութեանց անուանացանկը եւ պաշտօնները վաւերացնել:

5. Խմբագրական կազմ մը յառաջացնել կրօնական եւ հոգեւոր բովանդակութեամբ ՀԱԵՄ-ի տեղեկատու Պարբերաթերթը հրատարակելու: Խմբագրական կազմը պարտի:

ա.- Թղթակիցներու միջոցաւ Ծխական շրջաններու Երիտասարդաց, Պատանեաց Միութիւններու գործունէութիւններու, ծրագիրներու եւ աշխատանքներու շուրջ տեղեկութիւններ համադրել:

բ.- Մեր հոգեւոր ազգային աւանդներու եւ արժէքներու շուրջ կրօնա-դաստիարակչական բովանդակութեամբ յօդուածներ պատրաստել:

6. Միջ-թեմական թէ թեմական երիտասարդական կամ պատանեկան ճամբարներ, համագումարներ եւ ուխտագնացութիւններ կազմակերպել:

7. Վարիչ Մարմինը տարին անգամ մը կը ներկայացնէ իր գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը Ազգ. Երես-փոխանական թէ կրօնական համապատասխան ժողովներու:

### **3. Միութիւններ-Քաժանմունքներ**

Կազմակերպութիւնս լայն տարողութեամբ գոհացում տալու բոլոր տարիքի եւ հետաքրքրութեանց կարիքներուն, ինչպէս նաեւ արդիւնաւոր գործունէութիւն ծաւալելու նպատակաւ հարկ է որ ունենայ եւ կազմակերպէ Պատանեաց, Երիտասարդաց, Մարգական, Թատերական թէ այլ խումբեր:

#### **Ա.- Պատանեաց Խումբ/Միութիւն**

##### **Նպատակ եւ Պարտականութիւններ**

ա.- Պատանեաց խումբին կամ միութեան մաս կրնան կազմել Կիրականօրեայ Վարժարանի թէ շրջանաւարտ 14-էն 20 տարեկան պատանիներն ու պարմանուհիները:

բ.- Պատանեաց խումբի նպատակն է սերտել, ուսանիլ եւ դաստիարակուիլ համաձայն Աստուածաշունչի, հայ եկեղեցւոյ վարդապետութեան, աւանդութեան, պատմութեան եւ մշակութային ժառանգութեան: Պատանեաց Միութեան նշանաբանն է՝ *Միրել զԱստուած, յարգել մեծերը, եւ օգնել բոլորին:*

##### **գ.- Պատանեաց Միութիւնը պարտի**

1.- Կազմակերպել Ս. Գրային եւ եկեղեցագիտական թէ այլ բնոյթի օգտակար դասընթացքներ եւ սերտողութիւններ:

2.- Ոչ միայն եկեղեցագիտութեան եւ կրօնագիտութեան հանդէպ յատուկ սէր, հետաքրքրութիւն ցուցաբերել, այլեւ՝ եկեղեցական արարողութիւններու թէ Ս.

Պատարագի երգեցողութեանց գործնական մասնակցութիւնը բերել մաս կազմելով շրջանի եկեղեցւոյ Դպրաց Դասին:

3.- Պատանիներ հետամուտ ըլլան եւ հետեւին եկեղեցական Փոքր Աստիճաններու յատուկ դասընթացքներու՝ ստանալու համար համապատասխան Կարգ եւ Ձեռնադրութիւն:

4.- Հաճելի եւ շինիչ ընկերային բնոյթի ժողովներ, հաւաքներ եւ երեկոյթներ կազմակերպել:

5.- Լեռնագնացութիւն, դաշտագնացութիւն թէ՛ այլ պտոյտներ կազմակերպել:

6.- Օգտակար եւ դաստիարակիչ ծրագիր-յայտագրով ճամբարներ կազմակերպել:

### **Բ.- Երիտասարդաց Խումբ/Միութիւն Նպատակ եւ պարտականութիւններ**

ա.- Երիտասարդաց Խումբին մաս կրնան կազմել ամուսնացեալ թէ՛ ամուրի 21-էն 35 տարիք ունեցող երիտասարդ-երիտասարդուհիներ:

բ.- Այս միութեան անդամակցելով անդամներ կը ջանան զօրավիգ կանգնիլ Հայ Եկեղեցւոյ կրօնական-ազգային առաքելութեան: Երիտասարդաց Միութեան նշանաբանն է՝ *Գիտնալ, սիրել եւ ծառայել*:

գ.- Հետամուտ ըլլալ անդամներու քրիստոնէական դաստիարակութեան եւ հոգեմտաւոր հայեցի ազգային առողջ կրթութեան:

դ.- Գտնել եւ քաջալերել անդամներուն մէջէն շնորհալի ձիրքերու տէր անհատներ, ինչպէս գեղեցիկ ձայն թէ՛ այլ շնորհքներ եւ տաղանդ ունեցողներ՝ եւ անոնց առիթ տալ միութենական ձեռնարկներու ընթացքին արտայայտուելու:

ե.- Կրօնական, գրական, ընկերային թէ՛ այլ բնոյթի դասախօսական օգտակար երեկոյթներ կամ դասընթացքներ կազմակերպել:

զ.- Ազգային թէ՛ եկեղեցական տօներուն առթիւ ժողովրդային լսարան եւ գեղարուեստական յայտագիր կազմակերպել:

է.- Պատրաստել ու ներկայացնել անդամներուն եւ ժողովուրդին կրօնաբարոյական եւ ազգային բնոյթով կրթիչ եւ բարոյացուցիչ ներկայացումներ եւ թատերգութիւններ:

ը.- Անդամներ առաջնորդուելու են Քրիստոնէական կրօնի վեհ սկզբունքներով եւ հայկական տոհմիկ ընտանեկան օճախի սրբաբոյր մթնոլորտի աւանդութիւններով միշտ փոխադարձ սիրոյ, յարգանքի եւ բարոյական սկզբունքներու թելադրութեամբ, ստեղծելու՝ իտէալ Քրիստոնեայ Հայ Ընտանիքը:

թ.- Երիտասարդաց Միութեան անդամներ պարտին.

1.- Կազմակերպել եւ մասնակցիլ ՀԱՅՄ-ի Ս. Գրային, եկեղեցագիտական, կրօնական, ազգային, դաստիարակչական, ընկերային թէ՛ այլ ձեռնարկներու:

2.- Կազմակերպել արդի ընկերութիւնը թէ՛ հայ անհատը կամ ընտանիքը մտահոգող կամ հետաքրքրող օգտակար հաւաքներ եւ դասախօսութիւններ:



3.- Կազմակերպել ընկերային թէ՛ այլ մտերմիկ միջ-ընտանեկան կամ անդամական հանդիպումներ եւ հաճելի հաւաքներ:

4.- Կազմակերպել եւ ծրագրել միօրեայ թէ՛ եռօրեայ տարեկան սեմինարներ կամ ճամբարներ:

**Գ.- Մարզական խումբ կամ Բաժանմունք  
Մարզական խումբի Պարտականութիւնները**

ա.- Մարզական խումբի մաս կրնան կազմել Միութեան բոլոր տարիքի անդամները:

բ.- Մարզական խումբին նպատակն է դաստիարակել անդամները հոգածու ըլլալու իրենց մտային եւ Ֆիզիքական առողջութեան, ինչպէս նաեւ քաջալերել ու մղել զանոնք մարզանքի եւ առողջապահական կենցաղի: Որովհետեւ «մեր մարմինը Աստուծոյ բնակարանն է, պէտք է զայն սնուցանել, խնամել եւ հոգալ»:

գ.- Մարզական խումբը պարտի

1.- Անդամներու Ֆիզիքական առողջ զարգացման սատարող դասընթացքներ կազմակերպել:

2.- Կազմել ու կազմակերպել Պատանեաց թէ՛ Երիտասարդաց Միութիւններէն մարզական խումբեր՝ Վօլի Պօլի, Պասքէթ Պօլի, թէ՛ այլ մարզական խումբեր եւ մրցումներ:

3.- Միջ-թեմական, միջ-երիտասարդական մարզական խաղերու եւ մրցումներու մասնակցիլ:

**Յօդուած Ժ. ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Գործօն անդամները պարտաւոր են.-

ա.- Յարգել եւ հնազանդիլ կազմակերպութեան Ծրագիր Կանոնագրին:

բ.- Գործօն ոեւէ անդամէ կը պահանջուի գիտակցութիւն իր պարտականութեանց եւ պարտաւորութեանց հանդէպ զորս կը ստանձնէ: Որով որեւէ պաշտօն կամ գործ ենթական պարտի կատարել կատարեալ, ճշգրիտ, առանց տրտնջալու, առանց ուրիշի գործին արգելք կամ միջամուխ ըլլալու եւ նախանձախնդրութեամբ:

գ.- Գործօն ոեւէ անդամէ կը պահանջուի բարոյական մաքուր նկարագիր, բարի վարք եւ առողջ, ազնիւ միտք:

դ.- Իւրաքանչիւր գործօն անդամ կազմակերպութեան բարեգարդման համար պարտի տարեկան որոշ գումար մը \$ ----- տալ, որպէս խորհրդանիշ անդամատուրքի:

ե.- Ընտրել եւ ընտրուիլ:

**Յօդուած ԺԱ**

**ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

ա.- Նոր անդամներ կ'ընդունուին կազմակերպութեան մէջ առ նուազն վեց ամիս անդամակցած երկու հոգիներու երաշխաւորութեամբ եւ ծխական շրջանի երիտադասարդաց վարչութեան ուղղուած դիմումնագրով: Նոր անդամի մը քննութիւնը եւ երաշխաւորութեանց հաստատում եւ վաւերացումը կը պատկանի վարչութեան:

բ.- Իւրաքանչիւր անդամ պարտի բծախնդիր ըլլալ իր քրիստոնէավայել հայ կեանքին, եւ պատուախնդիր՝ կազմակերպութեան հանդէպ:

գ.- Այն գործօն անդամները, որոնք տարեկան ընդհանուր ժողովներէն երեք անգամներ, կամ վարչութեան թէ միութեանց կազմակերպած ձեռնարկներէն եօթը անգամներ առանց բանաւոր պատճառի եւ յաջորդաբար կը բացակային՝ կը դառնան ինքնաբերաբար համակիր անդամ:

դ.- Ոեւէ անդամ կամայ թէ ակամայ կազմակերպութեանս անդամակցութենէ դադրի կամ դադրեցուի, մինչեւ այդ օր վճարած դրամին/ անդամատուրքին կամ նուիրած պիտոյից վրայ սեփական-նութեան որեւէ իրաւունք չի կրնար ունենալ:

**Յօդուած ԺԲ**

**ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ**

Անդամակցութեան թեկնածուներ փորձարական եւ եկեղեցագիտական ու կրօնական որոշ պատրաստութենէ մը ետք ընդհանուր ժողովի ներկայութեան կամ ազգային-եկեղեցական յարմար տօնի մը առթիւ յոտնկայս ստորագրեն հետեւեալ խոստումնագիրը.-

ա.- Կը խոստանամ ունենալ գիտակից պատկառանք եւ հաւատք Աստուածաշունչ Մատեանին հանդէպ, եւ կարդալ ապրումով ու ջանալ իրագործել անոր վեհ սկզբունքները կեանքիս մէջ:

բ.- Կը խոստանամ տարին գոնէ Հինգ Տաղաւարներու առիթով խոստովանիլ եւ հաղորդուիլ:

գ.- Կը խոստանամ սիրել ու պաշտպանել ազգս, հայրենիքս ու եկեղեցիս, եւ բարձր պահել Կազմակերպութեանս պատիւը:

դ.- Կը խոստանամ մարմինս մաքուր եւ աստուածահաճոյ անօթի վերածել եւ հոգիս Աստուծոյ երկիւղով եւ Ս. Հոգիի շնորհքներով զարդարել, կեանքի պայքարին մէջ դէմ դնելու Չարին եւ փորձութիւններուն:

ե.- Կը խոստանամ ամէն Կիրակի ըստ կարելոյն ներկայ գտնուիլ Հայց-Եկեղեցւոյ սուրբ եւ անմահ Պատարագին եւ Կիրակին անցնել քրիստոնէավայել կերպով, մանաւանդ կեանքով ալ ուրիշներուն բարի օրինակ ըլլալ:

զ.- Կը խոստանամ ինձմէ մեծերուն հանդէպ պատկառանք ունենալ, օգնել տկարներուն եւ ինձմէ փոքրերը սիրել ու յարգել:

է.- Կը խոստանամ անթերի կերպով գործադրել կազմակերպութեանս Ծրագիր-Կանոնագիրը եւ անոր կարգապահական տրամադրութիւնները:

ը.- Կը խոստանամ սիրել, յարգել եւ անաղարտ պահել Հայ ազգային ժառանգութիւններն ու սրբութիւնները, ընտանեկան եւ ընկերային աւանդութիւններն ու բարքերը:

### **Յօդուած ԺԳ**

### **ՀԱՍՈՅԹՆԵՐ**

Կազմակերպութեան Հասոյթի աղբիւրներն են.-

ա.- Անդամատուրք

բ.- Միութենական հասութեաբեր ձեռնարկներ

գ.- Արտաքին օժանդակութիւններ կամ նուիրատուութիւններ:

### **Յօդուած ԺԴ**

### **ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ**

Անդամի մը կարեւոր գործը կամ գործունէութիւնը կը վարձատրուի Կեդրոնական Վարիչ Մարմնի կողմէ յարմար դատուած եղանակով:

### **Յօդուած ԺԵ**

### **ՊԱՏԻԺ**

Վարչութեան կողմէ կը կախակաշուին այն երկսեռ անդամները որոնք՝

ա.- Առանց պատճառի եւ յաջորդաբար չեն վճարեր իրենց անդամատուրքը:

բ.- Կազմակերպութեան խոստումնազրին եւ Ծրագիր-Կանոնագրին դէմ կը գործեն եւ միութենականի պատշաճ կեցուածք չեն ցուցաբերեր:

գ.- Ոեւէ անդամ որ պարտականութիւն մը կը ստանձնէ բայց կը թերանայ գիտակցաբար ու չի՛ կատարեր զայն:

### **Յօդուած ԺԶ**

### **ՎՏԱՐՈՒՄ**

Անդամ մը կը վտարուի կազմակերպութենէն՝

ա.- Բոլոր անոնք որոնք կազմակերպութեանս վարկը իրենց անպատշաճ կեցուածքով կամ անվայել վերաբերմունքով խնդրոյ առարկայ կը դարձնեն. Վարչութիւնը նախ բերանացի կը զգուշացնէ, կը սաստէ, կը կախակայէ եւ կարգի կը հրաւիրէ:

բ.- Վարչութեան բերանացի զգուշացումներուն եւ երկու գրաւոր ազդարարագիրներուն չանսացողներ եւ կարգի չհրաւիրուողներ՝ դուրս կը դրուին կազմակերպութեան շարքերէն:

**Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն (ՀԱԵՄ)**  
**ARMENIAN APOSTOLIC CHURCH YOUTH**  
**ASSOCIATION (ACYA)**

**Bylaws**

**ARTICLE I**

**NAME**

The association's name is: Armenian Apostolic Church Youth Association (ACYA).

**ARTICLE II**

**SUPPORTING BODY**

The Association operates under the auspices of the Western Prelacy and functions according to the administrative guidelines of the Religious and Executive Councils.

**ARTICLE III**

**PRESIDING OFFICER (S)**

The Prelate is the president of the Youth Directorate Council and the appointed religious director (s) presides over and supervises the Association's meetings.

**ARTICLE IV**

**LOCATION**

The Youth Directorate Council operates at the Prelacy.

**ARTICLE V**

**MOTTO**

“Be perfect as your Heavenly Father is perfect” (Matthew 5:48).

**ARTICLE VI**

**PURPOSE**

The motto is the reflection of the Council's aims:

1. To instruct the Armenian youth and young adults on the doctrines and traditions of the Armenian Apostolic Church.

2. To raise members' awareness of spiritual, religious, ethnic, cultural and national heritage.
3. To promote Christian love among members, so they may manifest that love through harmony, mutual respect and dedication and strive to become better Christians and ideal citizens.
4. To nurture dedication and loyalty towards the Armenian Church, so members may take an active role in the betterment and progress of that institution.

## **ARTICLE VII**

## **MEANS**

To meet the needs and accomplish the goals of this Association the Youth Directorate should consider but not be limited to these points.

1. Religious/Educational
  - a.- Lectures and panel discussions for its members and the community at large.
  - b.-To provide instruction and study forums for Armenian church history, the Armenian language, the Bible, the doctrines and liturgy of our church.
  - c.- To raise the religious awareness of its members as well as the community at large, should prepare lectures and study forums or write articles on major religious cults.
  - d.- Under the auspices and directives of the Western Prelacy's Religious Council organize panel discussions and interviews on current matters and religious issues.
2. Social Gathering  
Social gatherings which could include cultural activities such as singing, dancing, panel discussions, etc.
3. Theater  
To prepare and present plays and dramas on religious cultural and moral subjects.
4. Social Service  
To serve the various community institutions; schools, aging homes, hospitals and the needy.
5. To establish a library, reading room and area for sports and recreation.

6. To create and establish a **Web Site** for better communication and to reach out the various parish youth groups; to communicate and to post various Youth affiliated activities and upcoming events.

## **ARTICLE VIII**

## **MEMBERSHIP**

Membership is open to all those who are over the age of 14-20 for Youth Group, and 21 and over for Young Adults, who have been baptized in the Armenian Apostolic Church, and who have expressed a written desire to be members pledging to uphold and respect the goals of the Association.

## **ARTICLE IX**

## **ASSOCIATIONAL**

The Association shall have the following bodies:

- 1.- General Membership Meeting;
- 2.- Youth Directorate Council;
- 3.- Groups/Associations/Committees
  - a.- Youth Group
  - b.- Young Adults
  - c.- Athletic
  - d.- Drama troupe

### **1.- General Membership Meeting**

The Spiritual Director (s) as the presiding officer along with the representative from the Western Prelacy's Central Executive shall conduct the Annual Membership Meeting.

- a.- The Annual General Membership shall elect its own Executive Body for that day.
- b.- In the event that a simple majority is not present on a given Annual General Membership Meeting day, such meeting shall be adjourned and a new date set. Notice for the next meeting shall specify that the meeting will be conducted whether or not a majority is present.
- c.- There shall be no proxy voting. However, candidates may be absent so long as their absence is noted with a reasonable explanation. Moreover, the majority of the membership present must approve of their candidacy.

d.- A nine/eleven member Youth Directorate Council is to be elected from the Annual General Membership Meeting.

1.- Each parish Organization must elect/appoint five or seven candidates for nomination.

2.- The individual Organizations may conduct its election/appointment either by closed or open ballot.

3.- There should be a three to one ratio of candidates to the vacancies to be filled on the Directorate Council Board, unless otherwise approved by the Council.

4.- To be elected a candidate must secure at least 50/% plus one of the votes cast.

e.- The newly elected Council shall appoint/elect its own officers.

f.- The General Membership Meeting is to be held preferably in *March*, or prior to the Prelacy NRA's Meeting.

## **2.- The Youth Directorate Council and its responsibilities.**

a.- The Spiritual Director (s) is the presiding officer as well as the advisor of the Council.

b.- This Council is entrusted with the over-seeing of all the Associations' functions.

c.- Council members are elected for a term of two years. This term commences upon the approval of the Religious Council of the Western Prelacy. Council members may be re elected.

d.- Council vacancies during the term of office may be filled by individual (s) who secured the next most votes at the Annual General Membership meeting, unless otherwise approved by the Council.

e.- The Council is accountable to the Religious Council of the Western Prelacy. Furthermore, a written report is to be presented at the NRA's Annual Meeting.

f.- Prior to the election of a new Council, an Auditing Committee elected by the preceding year's Annual General Membership Meeting shall audit the outgoing Council's financial records.

g.- The outgoing Council remains in charge until that the new Council is approved by the Religious Council of the Western Prelacy.

h.- The outgoing Council shall transfer any and all belongings including but not limited to ledgers, bank account books, minutes etc. to the incoming Council. All transfers shall be made with appropriate documentations.

i.- The new Council, under the supervision of the Presiding officer (s) elect the following officers: Chair-person, Vice-chairman, Treasurer, Accountant, Recording Secretary and Corresponding Secretary.

j.- The Youth Directorate Council's Duties and Responsibilities:

1.- To oversee and execute the Associations' pursued goals or religious and educational teachings in accordance with doctrines and traditions of the Armenian Apostolic Church.

2.- To coordinate and oversee the activities of the Prelacy's parish Youth and Young Adult Organizations as specified by the bylaws of the Association.

3.- To communicate, via a correspondence –liaison the Council's suggestions, expectations and recommendations to the parish Youth and Young Adult organizations.

4.- To be advised of the appointed and elected officers, of various parish Youth and Young Adult organizations.

5.- To form an editorial staff to coordinate the publication of the ACYA's Periodical.

(1) Collecting relevant information concerning the activities and plans of the various church Youth organizations.

(2) To transmit our ethnic and religious heritage and faith via articles.



6.- Plan and organize inter-Prelacy youth and young adult seminars and/or retreats, fill trips and pilgrimages.

7.- To present its Annual Report to the Religious Council and to the Prelacy's NRA Meeting.

### **3.- Groups/Associations/Committees**

To meet the different age interests and various needs of its members as well as to become more successful and attractive, the Association should organize and have Youth Groups, Young Adults, Athletic and Drama troupe.

#### **A. YOUTH GROUP**

##### **PURPOSE AND ACTIVITIES**

a.- Membership in the Youth Group is open to all Sunday School students and/or graduates from 6<sup>th</sup> grade to 20 years old.

b.- The purpose of the Youth Group is to study and learn, and take example from the Holy Gospels, our Church tradition and History and Culture of the Armenian people. The Youth Group motto is: "to love Almighty God, respect elders, and help mankind".

c.- The Youth Group should:

- (1) Organize classes and session on various subjects such as: Bible study, Church doctrines and history etc.;
- (2) Demonstrate their love and devotion to the Armenian Church through active participation in liturgical life, vis-a-vis, singing in the Choir, serving on the altar, etc.;
- (3) Attend special instructional classes for preparing candidates for Ordination to the minor Orders of the Armenian Church, i.e. Readers, Acolytes, Stole bearers, etc.;
- (4) Organize pleasant and constructive meetings and social gatherings;
- (5) Organize camping and swimming expeditions as well as picnics and field trips;
- (6) Organize spiritual and educational retreats and seminars.

**B- YOUNG ADULTS**  
**PURPOSE and ACTIVITIES**

- a.- Membership in Young Adults is open to all married and single adults over the age of 21 years.
- b.- The purpose of this organization is to promote the religious and ethnic ideals of the Armenian Church. The Young Adults motto is, “to know, to love and to serve”.
- c.- To promote awareness of our faith and provide Christian Education to the new generation. (Traditions, ethnic and religious teachings).
- d.- To seek and encourage specific abilities among their members and provide opportunities during appropriate functions for self-expression. i.e. singing, recitation, Scripture readings, etc.
- e.- To organize religious, literary and social forums to increase community awareness on given topics.
- f.- To organize cultural and religious programs for appropriate church/national feasts and holidays.
  - (1) Educational courses for members.
  - (2) Public lectures.
- g.- To organize a drama troupe to put on public performances. Plays could include religious, social, patriotic and humorous themes.
- h.- The Young Adults organization should strive to promote an environment of Christian love and Armenian Ethnic family ideals which will further the principle of mutual love, respect, moral values in their lives.
- i.- The Young Adults Organization members should:
  - (1) Actively participate in ACYA activities such as: bible study, ecclesiastical, religious, educational, social and other functions;

- (2) Organize lectures and gatherings that address topics of major concern to families and modern society;
- (3) Organize social and inter-family get-togethers;
- (4) Plan and participate in yearly seminars and/or retreats which could be from 1 to 3 day duration.

### **C.- ATHLETIC GROUP PURPOSE and ACTIVITIES**

a.- Membership in the Athletic Group is open to all members of the ACYA regardless of age.

b.- The purpose of the Athletic Group is to educate members about maintaining their minds and bodies, promote good health and encourage sportsmanship. “Our body is the temple of God, therefore, we must always care for and nurture it”.

c.- The Athletic Group should

- (1) Organize lectures, classes and programs on various health issues, i.e. diet, exercise, etc.;
- (2) Form and organize competitive athletic teams for football, baseball, soccer, volleyball, basketball, tennis, etc.;
- (3) Participate in inter-Church competitive events and tournaments.

## **ARTICLE X**

## **DUTIES/ RESPONSIBILITIES**

Active members should:

- 1.- Respect and abide by the Council’s bylaws.
- 2.- Be cognizant of his/her undertaken duties and responsibilities and accomplish such with zeal, willingness and accuracy, without complaining or meddling.
- 3.- Lead a Christian lifestyle and be of high moral character.
- 4.- Participate by contributing a \$5.00 annual membership fee.

5.- Participate in the election process of their local organizations.

## **ARTICLE XI**

## **MEMBERSHIP REQUIREMENTS**

1.- Membership is available to all Armenian Youth and Young Adults who uphold the faith of the Armenian Apostolic Church and support the doctrinal, national and religious mission of the Church.

2.- New members are accepted in the organization's parish chapters by presenting a written request/application. New members must be sponsored by two members in good standing, who have been members for at least six months. The parish chapter's council reserves the sole right to accept or reject the applicant's membership.

3.- Each and every member is expected to be diligent in his/her Christian lifestyle and maintain a respectful posture towards the organization.

4.- Those active members who are:

a.- Absent for three consecutive ACYA Annual General Membership meetings; or

b.- Absent from seven consecutive Executive or Committee activities without due cause are considered as Auxiliary members.

Note: The Youth Directorate Council reserves the right to suspend the membership of auxiliary members if such members fail to fulfill their duties in the course of a year.

5.- Any and all donations, gifts, contributions to parish chapter shall become the property of the chapter upon its receipt, unless otherwise designated.

## **ARTICLE XI**

## **PLEDGE**

Candidates for membership shall be instructed in religious and ecclesiastic matters before reciting and singing the oath of membership; which will take place during the general membership meeting or an appropriate religious feast day.

Membership Pledge:

1.- I pledge to uphold the high standards of the Holy Bible and to faithfully read and incorporate its moral principles in my daily life.

2.- I pledge to attend Confession and participate in Holy Communion on the five major feasts of the Armenian Apostolic Church (Christmas, Easter, Transfiguration, Assumption of the Holy Virgin Mary, Holy Cross).

3.- I pledge to love and protect my nation, my homeland and my Church and respect the ideals of this organization.

4.- I pledge to maintain my body as the temple of God and shield my soul with the gifts of the Holy Spirit to overcome the temptations of evil.

5.- I pledge to attend the Divine Liturgy of the Armenian Apostolic Church on every possible Sunday, and to keep the Lord's day sacred by conducting myself according to the high standards of the Christian faith.

6.- I pledge to respect my elders, help the needy and to love and nurture the youth.

7.- I pledge to uphold and execute the bylaws and disciplinary provisions of this organization.

8.- I pledge to love, respect and observe the traditions of my Armenian heritage as well as my familial and social norms and customs.

**ARTICLE XII**

**ARTICLE XIV**

**INCOME**

Income for the Association is derived from:

1.- Associational functions, i.e. Dinners, Dances, etc.

2.- Donations and gifts.

3.- Membership dues.

## ARTICLE XV

## RECOGNITION AND HONORS

A member, committee or group may be recognized and/or rewarded by the Directorate Council in an appropriate manner.

## ARTICLE XVI

## PUNISHMENT

1.- The Directorate Council may suspend any member for:

- a.- Disregarding and defying of the ACYA pledge and/or bylaws;
- b.- Willful and/or intentional neglect of duties.

2.- The Directorate Council may expel any members for disciplinary reasons only after all attempts have been made to discipline the member in the following manner: Oral reprimands and two written warnings.